

կըսեն պ. Մ. Եկմալեանց Կովկասի հմուտ երաժշտագէտներէն մին և և աղաս յորջորջեալ գեղարուեստագէտ։ բայց մենք գիտենք, որ ոչ հմուտ երաժշտագիտութիւնը և ոչ իսկ ազատ գեղարուեստագիտութեան մրցագրերը իրաւունք կուտան որ և է անձ մը ընդունել իբրև հեղինակութիւնը ընդհանուրին վերապահեալ սեպհականութեանց նկատմամբ։ նա ոչ երբէք կարող է հեղինակաւոր հանդիսանալ հասարակական գործին մէջ, այլ գործունեութեան մէջ։ և ընդհանուրին պատկանող խնդիրն ևս ընդհանուրը պէտք է վճռէ և ոչ անհատի մը, դիցուք, եղակի ընդունակութիւնը հայկական երաժշտութեան հմուտ անձանց խումբ մը պէտք է, որին յանձնելու է այդ գլխաւոր և ընդիրը։ իսկ եթէ չկան և կպակասին այդպիսիք, հոգ չէ, կարելի է քանի մը ժամանակ ևս համբերել, կորուստ չենք ունենար, վասն զի չպէտք է ապաւինել և յենուլ անհատի ընդունակութեան վերայ, որ կարող է օգուտ բաղել այս տեսակ զիջումէն և իւր քմահաճըները մուծելի Պէտք է գործը ամեն կողմէն դիտել։ Առ այժմ մեր զգացմանց սնունդ կարող է առ միաձայն երգեցմունքն ևս կանոնաւոր երաժշտական հիմունքներով։

Արմեգ

Լոնդոն 17/29 ապրիլ:

ԲԵՕՆՏԳԵՆԻ ԳԻՒՏԸ

Նրբ, ըստ երեսութին, լուսանկարչութիւնը համնում էր սյն կէտին, որ պիտի կարողանար արտասանել իւր վեր ջին խօսքը, ամբողջ Եւրոպայում կայծակի արագութեամբ ապահուեցաւ Վիլյորբիւրգի համալսարանի ուսուցչապետ Բեօնտգենի նոր գիւտի լուրը։ Սյն համառօտ յօդուածով կաշխատենք ծանօթացնել և ըստ մույթի ընթերցողներին այդ խնդրի էութեան հետ, քաղուածաբար առնելով „Միք- Բօջնի“ ամսագրի արդյուն մարտի համարում տպուած այդ խնդրին վերաբերեալ մի ընդարձակ յօդուածից։

Եթէ վերցնենք Կրուկսի խողովակը և նորա մէջ բում-

կորֆի պարոյրի (սպիրալ) միջով անցկացնելու լինենք կայծ, այդ խողովակը կրուսաւորուի մի առանձին տեսակ լուսածնային (Փօսֆօրբ) լուսով: Եթէ այդ խողովակը ծածկենք որ և է անթափանցիկ ծածկոցով, և նրանից քիչ հեռու տեղաւորենք պլատինա-բարիհական ցիանատով (ՊԼՈՏԻՆՈՎՈ-ՇՈՒՆԿԻՍՏԱԿԱՆ բարի) յագեցրած մի թերթ թուղթ, այդ թուղթը ել կրուսաւորուի:

Որովհետև Բեօնտգենը գիտէր, որ այդ թուղթը կարող է լուսարուել միայն այն ժամանակ, երբ նրա վրայ ընկնում են ճառագայթներ, իսկ այս դեպքում թուղթը պաշտպանուած էր անթափանցիկ ծածկոցով, եկաւ այն եղրակացութեան, որ կրուկսի խողովակից դուրս են գալիս մի տեսակ ճառագայթներ, որոնք յատկութիւն ունին անցնելու սովորական լոյսի համար անթափանցելի համարուած առարկաների միջից: Բեօնտգենը այդ ճառագայթները անուանեց **X**—ճառագայթներ և սկսեց ուսումնասիրել:

Այդ արօրինակ ճառագայթները ուսումնասիրելու համար նախօրօք պիտի ծանօթանալ լուսոյ այն երկութների հետ, որոնք առաջանում են խողովակի մէջ, երբ նրա միջից անցնում է ելեքտրական կայծը:

Եթէ իրար մօտեցնելու լինենք երկու մարմններ, որոնցից մէկը ունի իր մէջ գրական, իսկ միւսը ժխտական ելեքտրականութիւն, կաեւնենք, որ այդ առարկաների մէջ գոյանում է կոյժ: Եթէ փորձը կատարում է սովորական օդի մէջ—ուժեղ կայծ ստանալու համար հարկաւոր է ելեքտրական մեծ ոյժ, բայց եթէ այդ մարմնները աեղաւորելու լինենք անօսրացած օդի մէջ, այդ դեպքում ելեքտրական թոյլ ոյժով ևս կարելի է բաւականին երկար կայծ ստանալ: Սակայն վերջին կայծը երկար լինելով հանդերձ պակաս պայծառ կլինի: Այդ օրինակ կայծեր ստանալու համար յարմար է գործադրել Հեյսլերի խողովակը, որի միջից դուրս է հանուած բաւականին օդ (պարունակում է մէկ միջնորդական 100 կամ 200 անգամ պակաս): Խողովակի միջի օդը դուրս հանելուց յետոյ նրա հակառակ ծայրերին կպցնում են պլատինայի թելեր: Արդ՝ եթէ պլատինայի թելերի ծայրերը միացնելու լինենք ելեքտրական մքենայի հետ, այնպէս որ թելերից մէկը ստանայ դրական,

իսկ մեսը ժխտական ելեքտրականութիւն, խողովակում, թելերի մէջ կայծ կընկատենք, որի երկայնութիւնը հաւա-սար կլինի թելերի ներսին ծայրերի մէջ եղած տարածու-թեանը:

Այդ օրինակ կայծը դիտելու համար յարմար է գոր-ծադրել բումկօրֆի պարուըը (սպիրալ):

Հեյսլերի խողովակի մէջ ստացուած կայծը հետեւալ առանձնայտակութիւններն ունի. Բումկօրֆի պարուըրի (սպի-րալ) դրական բևեռի հետ միացած պլատինայի ծայրը ներ-կայանում է իրու կայծի ազդեցությամբ, թելի ներսի ծայրից, իրու մի լուսատու կետից կայծը ուղղում է դէպի խողո-վակի հակառակ ծայրում գտնուած պլատինայի թելը, որ միացած է բումկօրֆի պարուըրի (սպիրալ) ժխտակ բևեռի հետ: Դեռ ևս ժխտական բևեռին չհասած այդ կայծը կորց-նելով սաստիկ իւր փայլը, կարծես անհետանում է, այն-պէս որ ժխտական բևեռի մօտ մնում է գրեթէ մուժ տա-րածութիւն, իսկ ժխտական թելը կարծես շրջապատուած է լինում հազիւ նկատելի փայլով: Այդ լիսն աւելի պայ-ծառ է լինում խողովակի այն ծայրում, որ գտնւում է թե-լի ժխտական ծայրի (կադրո) հանդէպի Պարզ է, որ մենք այժմ գործ ունենք պատեսակ ճառագայթների հետ, որոնք այժմ գործ ունենք պատեսակ ճառագայթների հետ, որոնք գործ են գալիս կադրուից և առաջացնում են ապակու դուրս են գալիս կադրուից և առաջացնում են ապակու փայլը: Այդ ճառագայթները, որոնց մանրամասն ուսում-նասիրել են կրուկսը և այլ գիտականներ, կրում են կա-ղուստային ճառագայթներ. անունը, իսկ խողովակը կը ուկ-սի խողովակ, որովհետեւ այդ գիտականն սկսեց ուշագրու-թեամբ ուսումնասիրել յիշեալ խողովակի մէջ չափազանց անօսրացած օդի յատկութիւնները:

Կադրուային ճառագայթների ուսումնասիրութիւնը ի միջի այլոց ցոյց են տալիս, որ նրանք ընդունակ են անց-նելու այնպիսի առարկանների միջեց, որոնք սովորական լոյ-սի համար անթափանցիկ են համարւում: Այսպէս յայտնի ալիւմնում կոչուած մետաղի միջից արևի ճառագայթը չի թափանցում, ինչքան և բարակ թիթեղ վերցնելու լինենք, Այդ երևում է նրանից, որ եթէ կրուկսի խողովակի մէջ, Այդ երևում է նրանից, որ եթէ կրուկսի խողովակի մէջ,

գելում, այլ անց է կացնում ճառագայթները, որոնք դիպ-
չելով ապահուն լուսաւորում են պատնիշի ետևիցը այն
աեղը, որտեղ ամեննին լոյս չպիտի երևայ, եթէ պատնէ-
շը նրանց արգելելու լինէր:

Ի՞նչ են ուրեմն ըստ էռթեան այդ ճառագայթները:
Այդ հարցի մասին որոշ կերպով պատասխան տալ առ
այժմս ոչ ոք չի յանձն առնում, կան մի բանի ենթադրու-
թիւններ, որոնցից մենք առաջ կրերենք առաւել հաւանա-
կան կարծուածը:

Բնագէտների մեծագոյն մասն այն կարծիքի է, որ կա-
դուային ճառագայթները ոչ այլ ինչ են, բայց եթէ նիւ-
թական ելեբարականացած մասնիկներ, որոնք կրուկսի խո-
ղովակի մէջ, ելեբարական հոսանքի ազդեցութեան տակ,
դուրս են գալիս կադուածից:

Այս ենթադրութիւնը հաւանականութիւն է գտել
գլխաւորապէս այն պատճառով, որ սա բացարում է կա-
դուային ճառագայթների բոլոր յատկութիւնները:

Հունգարական բնագէտ Լինարդի նկատած հետաքըր-
քիր երեսով նոյնպէս կարելի է բացատրել վերոյիշեալ
ենթադրութեամբ, Լինարտը կադուային ճառագայթները
ուսումնասիրելիս նկատեց, որ նոցա մարմինների միջից
անցնելը կախուած է ոչ թէ մարմինների թափանցկութիւ-
նից, այլ նորա խոռութիւնից: Եթէ ընդունենք, որ կադու-
ային ճառագայթները նիւթական մասնիկներից են առա-
ջանում, ապա շատ հաւանական է, որ այդ մասնիկները
մեծ ոյժով դիպչելով այս կամ այն մարմին, գնդակի նման
ծակում անցնում են նրա միջից և որովհետև նրանք անշափ
փոքր են, այդ պատճառով թուզում անցնում են մար-
մի մասնիկների միջից, որին դիպչում են: Որքան
մարմինը նիւթ է, պիտի ենթադրել, որ այնքան էլ այդ
միջանցքները մանր են — ուրեմն այնքան էլ կադուային
ճառագայթների մէջ անցնող նիւթական մասնիկները դժուար
կանցնեն նրանց միջից, ուրեմն նրանք ճանապարհին որևէ է
տեղ արգելում են:

Բոլոր վերսպիշեալից երեսում է որ կադուային ճառագայթ-
ները, հետաքըրքիր հանելուկ լինելով բնագէտների համար,
պիտի գրաւէին և նրանց հետաքըրքութիւնը: Հաւանականէ,

որ այդ ճառագայթների մի բանի յատկութիւնների հետ
ունակոթանալու ցանկութիւնն էր, որի շնորհիւ բեսնտգենը ա-
րեց իւր նշանաւոր դիւտը:

Կադոսային ճառագայթների հետ փորձեր հանելով
բեօնտգենը փորձի ժամանակ գործածած կրուկսի խողովա-
կը ծածկեց սև անթափանցիկ լաթով, Խողովակի հանդէպ
դրուած էր մի թերթ թուղթ ծածկուած պլատինա բարիա-
կան ցիանաւով:

Այդ թերթը, երբ նրա վերայ ընկնում են կադոսա-
յին ճառագայթներ, յատկութիւն ունի փայլելու բնորոշ
կանաչ գոյնով: Քանի որ կրուկսի խողովակը ծածկուած չէր,
ի հարկէ նրա հանդէպ դրուած թերթը լուսաւորւում էր.
սակայն բեօնտգենը նկատեց, որ թուղթը տակաւին փայ-
լում է մինչև անգամ այն դեպքում, երբ կրուկսի խողովա-
կը ծածկուած է լինում անթափանցիկ լաթով: Գիտնալով
որ վերցրած թուղթը լսու է ընդունում միայն այն դէպ-
քում, երբ նրա վերայ ճառագայթներ են ընկնում, և նկա-
տելով որ լուսաւորւում է վերև յիշուած պայմանների մէջ,
բեօնտգենը պէտք է այն եզրակացութեան գար, որ ներկայ
պայմաններում, այսինքն երբ կրուկսի խողովակը ծածկուած
է անթափանցիկ լաթով, նրանից դուրս են գալիս մի տեսակ
անտեսանելի ճառագայթներ, որոնք ընկնում են թղթի վե-
րայ և լուսաւորում են նրան: Ահա այդ ճառագայթները
նա անուանեց Տ—ճառագայթներ:

Որովհետև ճառագայթները անթափանցիկ առարկանե-
րի միջով անցնելու ընդունակութիւն ցոյց տուին, այս պատ-
ճառագայթներնը վճռեց փորձել թէ գորա բնչպիսի ընդու-
նակութիւն ցոյց կտան ստուարաթղթի, փայտի և մետաղ-
ների միջից անցնելիս, և այն եզրակացութեան եկաւ, որ
իւր գտած Տ—ճառագայթները ազատ կերպով անցնում են
թղթի, փայտի, զանազան գործուածքների և մարդու մարմ-
նի միջից, իսկ մետաղների մէջ նրանք դժուարութեամբ են
անցնում, յանաւանդ պլատինայի և արձիձի միջից: Բոլոր
մետաղներից միայն ալիւմնը հեշտութեամբ անցկացրեց
Տ—ճառագայթները: Խակայն կան և այնպիսի առարկաներ,
որոնք թափանցիկ են համարւում սովորական ճառագայթ-
ների համար, իսկ Տ—ճառագայթները չեն անցկացնում:

Այսպիսի առարկաներից է օրինակ փայլարը (Ըլուձա),

Որպէս զի այս ուղղութեամբ ուսումնասիրէ զանազան մարմնները, Իեօնտգենը հետևեալ կերպով վարուեց: Նա տեղաւորուեց կրուկոի խողովակը, նրանից մի փոքր հեռու դրեց պլասմա - բարիական ցիանիտով ծածկուած մի թերթ թուղթ և ապա խողովակի և թղթի մէջ տեղը դրեց փորձելի առարկան Եթէ սյդ մարմնը իւր միջից անցէր կացնում Տ-ձառագայթները, ապա թղթի թերթի վրայ լոյսը շարունակ ընկած էր մնում առաջուայ նման, երբ գեռ մարմնը չկար, իսկ եթէ չէր անցկացնում ձառագայթները, թերթը լուսաւորուում էր ամեն ուրեք, բացի այն առարկայի դիմացի տեղը, որ չէր անցկացնում Իեօնտգենի ձառագայթները: Այսպիսով ստացւում էր հետևեալ պատկերը. բոլոր թերթը փայլում էր, իսկ փորձելի մարմնի դիմաց ստացւում էր ստուեր, որ իւր գծերով միանգամայն նման էր լինում այդ մարմին:

Այնուհետև գիտենալով, որ իւրաքանչիւր ձառագայթ, որը ընդունակ է լուսաւորել մի այլ մարմին, խիստ կերպով ներգործում է լուսանկարչական դիւրազգաց թիթեղի վրայ — Իեօնտգենը իւր գործադրած թղթի փոխարէն վերցրեց լուսանկարչական սովորական թիթեղը արկղեկի կասսետի մէջ զետեղուած և դրեց կրուկոի խողովակի հանդէպ: Խողովակի և արկղեկում փակուած սյդ թիթեղի մէջ նա զետեղեց արկղով կշռորդներ:

Այս փորձն անելիս Իեօնտգենը մտածում էր հետևեալ կերպով. եթէ Տ-ձառագայթները ընդունակ են անցնելու փայտի մջից և բացի սյդ ընդունակ են ներգործելու լուսանկարչական թիթեղի վրայ, ապա պիտի ստացուի հետևեալը:

Կրուկոի խողովակից եկող Տ-ձառագայթները կընկնին կշռորդը պարունակող փայտէ արկղի վրայ: Այսաեղ նրանք պիտի պատահեն նաև փայտի (արկղ) և ապա մետաղի (կշռորդ): Փայտի միջից պիտի անցնեն, իսկ մետաղի միջից — ոչ: Այսպիսով արկղի միջից պիտի դուքս գան միայն այն ձառագայթները, որոնք չեն հանդիպել մետաղին, այդ ձառագայթները պիտի համենին թիթեղի արկղեկին (նոյնպէս փայտ) և անցնելով նրա միջի պիտի ընկնին նրա մէջ զետեղած լուսանկարչական թիթեղի վրայ և նոյն ներգործութիւ-

նը պիտի անեն, ինչ ներգործութիւն անում է լցում այդ
դեպքում այդ տեսակ թիթեղների վրայ:

Թիթեղի վրայ ինչ կսացուի. նրա այն մասերը, ուր
ընկել են Խ-ճառագայթները, պիտի սևանան և անփոփոխ
պիտի ման այն տեղերը, ուր նրանք չեն դիպել եւ որով-
հետև ոչ մի ճառագայթ չընկաւ նրա այն մասում, որ հա-
մապատասխանում է կշռորդին, որ արգելեց Խ-ճառագայթ-
ների մուտքը, ուստի և բոլոր թիթեղը աւելի կամ պակա-
ստիճան պիտի սևանայ, բացի կշռորդին համապատասխան
տեղերից ուրիշ խօսքով թիթեղի այդ տեղերում կսացուի
կշռորդի եզերագիծը:

Փորձը իսկապէս արդարացրեց նրա ենթադրութիւնը
և նա ստացաւ կշռորդի պարզ ստումբագիծը:

Այս փորձի նկարագրութիւնից երևում է, որ մենք այս
դեպքում լուսանկարչութեան հետ գործ չունենք: Լուսա-
նկարչութիւնը մեղ տալիս է նկարելի առարկայի կատարեալ
պատկերը, այն ինչ մենք այստեղ ստանում ենք նկարելի ա-
ռարկայի լուսանկարը և ոչ թէ առարկան: Բեօնտգենի ստա-
ցածը կարելի է յարմարացնել հետևեալ դեպքին. ընդու-
նենք, որ մենք լուսանկարչական թիթեղի վերայ դրել ենք
մամազէ դրամ և ապա թիթեղը ենթարկենք արևի ճա-
մի մասաղէ դրամ և ապա թիթեղը սովոր մակերևոյթը
ռագայթների ազդեցութեան. թիթեղի բոլոր մակերևոյթը
կսկանայ, բացի այն տեղից՝ ուր դրուած էր դրամը. այս-
պէս մենք սև տեղի վերայ կստանանք սպիտակ շրջանակ:
Ուրեմն այստեղ ոչ թէ դրամի լուսանկարը կստանանք, այլ
նրա ստուերագիծը:

Նոյնպիսի ստուերագիծ ստացաւ բեօնտգենը նաև կը շ-
ռորդից: Բայց որովհետև շատ առարկաներ, որոնք ան-
թափանցիկ են համարւում սովորական ճառագայթների հա-
մար—թափանցիկ են Խ-ճառագայթների համար, այդ պատ-
ճառով և հնար եղաւ ստանալ այնպիսի առարկաների ստուե-
րագծեր, որոնք ծածկուած են անթափանցիկ արկղներում:

Այսպէս ուրեմն զանազան անթափանցիկ առարկաներ
թափանցիկ դարձան բեօնտգենի ճառագայթների համար:
Այդ ի նկատի ունենալով բեօնտգենը կրուկսի խողովակի
և լուսանկարչական թիթեղի մէջ բռնեց իւր ձեռքը. նա ի
նկատի ունէր, որ Խ-ճառագայթները հեշտութեամբ կանց-

նեն կաշուի և ձեռքի պյլ կակուղ մասերի մէջ և արգելքի կհանդիպեն ոսկրներից, ուրեմն թիթեղի վերայ կտացուի իւր ձեռքի թոյլ ստուերանկարը և ոսկրների պարզ ստուերը. այլապէս ասենք, կարելի էր սպասել, որ թիթեղի վրայ կտանայ ձեռքի ոսկրների պարզ նկարը: Փորձը փայլուն կերպով հաստատեց այդ ենթադրութիւնը և մնաք այժմ միջոց ունինք ստանալու կենդանի ձեռքի և ոտքի կմաղքը և այնքան պարզ, որ կարծես, թէ ոչ կաշուով լինի ծածկուած և ոչ մէաններով:

Ծանօթանալով Ենօնտգենի ճառագայթների հետ, մասւանդ երբ այդ ծանօթութիւնը փորձով է լինում, բնական է, որ իւրաքանչիւր որ հարց ապա, թէ արդեօք ինչ տարօրինակ և միանգամայն անսովոր ճառագայթներ են դորա:

Ինչպէս վերոգրեալից երևեցաւ, մինչև անգամ կադուային ճառագայթները դեռ ևս ուսումնասիրուած չեն և ոչ պարզուած է նրանց յատկութիւնները: Գուցէ եթէ կաղոտային ճառագայթների հարցը վճռուած լինէր, ապա նորագիւտ չ-ճառագայթները աւելի հասկանալի լինէին. այդ պատճառով եթէ մի բան կարելի է լինում ասել այդ մասին — միայն ենթադրութիւնների վրայ պիտի հիմնել, որ մնաք աւելորդ ենք համարում այս յօդուածի մէջ առաջ բերել, բանի որ հիմք չկայ առ այժմս այդ ենթադրութիւններից որ և մէկը աւելի հաւանական համարել:

Այժմ դիմնք այն հետևանքներին; որոնք ներկայումս ստացուեցան Ենօնտգենի գիւտից.

Աչքի առաջ ունենալով որ սովորական ճառագայթների համար անթափանցիկ համարուած մարմինները թափանցիկ են չ-ճառագայթների համար, պէտք է սպասել, որ եթէ այդ ճառագայթները ձգելու լինինք այն պիտի առարկայի վրայ, ինչպիսին ձեռքի ափն է, որ բազկացած է զանազան խտութիւններ ունեցող հիւսուածքներից, ապա, նրանք ազատ կանցնեն մի բանի մասերից, իսկ միւսներից դժուարութեամբ և վերջապէս մի բանիսից բոլորովին անցնել չեն կարող: Ուրեմն եթէ լուսանկարչական թիթեղի վրայ դնենք ձեռքը և վերևից լուսաւորենք Ենօնտգենի ճառագայթներով ապա թիթեղի վրայ կնշմարուի, թէ ձեռքի որ մասերից ա-

ւելի հեշտ են անցել ճառագայթները և որոնցից առաւել դժուար:

Եթօնտգենը այդ փորձից հետաքրքիր եզրակացութեան եկաւ. ճառագայթները հիւսուածքների միջից հեշտութեամբ անցան, այն ինչ ոսկրներից ոչ, այդ պատճառով լուսանկար-չական թիթեղի վրայ ստացաւ ոչ թէ բոլոր ձեռքի, այլ միայն նրա կմաղքի սոսուերագիծը: Նայելով թէ ինչպէս է կատարուած փորձը և ինչ գործիքներ են գործադրուում այդ միջոցին, նկարն էլ լինում է առաւել կամ պակաս պարզ:

Եթօնտգենի ճառագայթների այն առանձնայատկութեան շնորհիւ, որ նրանք անցում են մարմի կակուղ մասերից և անանցանելի են ոսկրների, մետաղների (բացի ալյումինից) և մի քանի մարմինների համար, այն գործնական հետևանքների հասան, որ այդ ճառագայթները կարող են գործադրութիւն ստանալ բժշկականութեան, աւելի ճիշտ, անդամահատութեան մէջ: Եթէ, օրինակ, մարմի այս կամ մասում մացել է ասեղ գնդակ և կամ մի ուրիշ առարկայ, Եթօնտգենի միջոցով հնարաւոր է լինում որոշել թէ ո՞րտեղում է մացել այդ արտաքին մարմինը: Այդ ճառագայթներով լուսուրելով վիրաւորուած տեղը՝ մենք կստանանք այն մարմի պարզ ստուերագիծը, որ մացել է մարմի սյս կամ այն մասում:

Թէ ինչ է սպասում Եթօնտգենի ճառագայթներին ապագայում, այժմ դժուար է մի քան ասել: Սակայն կարելի է ենթադրել, որ կանոնաւոր փորձերը, որ շատերը կանեն այդ ճառագայթների հետ, միջոց կտան ստանալու ոչ միայն առարկաների ստուերագիծը, ինչպէս այժմ են ստանում, այլ և առաւել կատարելագործած արտատիպեր, ուր ըստ ցանկութեան հետախոյզի կարելի կլինի ստանալ կենդանի մարմի ցանկալի մասի նկարը:

Ա. Սպարապետեան:

Սոյն թուականի յունուար ամսին ամբողջ Եւրոպայի մանկավարժական աշխարհը տօնեց Հայնրիխ Պետալոցցի հանրահռչակ մարդասէր-յանկավարժի ծննդեան հարիւր յինամեայ յորելեանը: Մանաւանդ առանձին շքով տօնուեց այդ հանդէսը Պետալոցցու Հայերէնիքում Զուիցերիայում: Ճանեն, Ցիւրիխ, Լուցերն և այլքաղաք-